

Բ Ա Ն Ա Մ Ի Ր

Է Ա Ն Ո Ւ Ն

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵԶՈՒԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ

Ա ՏԱՐԻ	Տարեկան՝ 20 ֆր․ ամէն տեղ :	ԳԻՐԳ Գ
1899	Մէկ թիւը՝ 6 ֆր․ :	1899

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ԲԵԻԵՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Է Ա Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՆԿԱՏՄԱՄԻ

ԶԹՆՈՒԱՆ

ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԻԿԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՕՄՄԱՆ ԶԻՒ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ ԱՌԹԻԻ

«Եթէ դոքա լռեսցեն ,
«Քարինքդ աղաղակեսցեն»
ԱԻԵՏԱՐԱՆ

Այլեւս առեղծուած մը չէ , ո՛չ ալ երեւակայական եւ անստոյգ գիւտութիւն մը , բեւեռաշիրներու կնճռոտ ուսումն , իր ժամանակին աւմէնէն աւելի մեծ սեմագէտն ու գիտնալանը՝ Ռեան՝ տարակոյս կը յայտնէր եւ կը քննադատէր աւագ բեւեռագէտ Ոպպերտին տուած մեկնութիւնները , գրուած ուսումնական ուղղեւորութեան մը առթիւ : Ռեանսի հետեւելով Գարագաշեան ալ մեր մէջ սկսաւ բեւեռագիտութեան վրայ տարակուսական աչօք նայիլ , որով իր Քննական Հայոց Պատմութեան մէջ ալ՝ պարտ ու պատշաճ տեղը չտուաւ անոր : Բայց նորանոր գիւտեր եւ քննութիւններ հաստատեցին այն ամէնը՝

գոր ըսած էր բեւեռագիրտութեան մեծահմուտ ուսուցիչն մեր Ուպերտ , երբ՝ տակաւին մանուկ՝ դողդոջ քայլերով յառաջ կ'երթար նոյն գլխութիւնն , որ մեծ յոսեր սփռելու կոշուած էր արեւելեան հին ազգաց պատմութեան հետ նաեւ մեր բնիկ պատմութեան վրայ :

Մեր Ոսկեգարեան կոշուած Դ եւ Ն զարերու ազգային մատենագիրներէն շատ յառաջ , երբ տակաւին Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ չէին ծնած , եւ արդի հայերէն տառերու գոյութիւնն իսկ չկար , հոն՝ բուն Հայաստանի մէջ՝ դանազան մեծ եւ փոքր ազգեր իրենց գոյութեան կոիւր կ'ընէին , եւ ի մասնաւորի Ասորեստանի հզօր պետութեան դէմ մեծ պայքարներ կը մղէին բոլորը մէկէն միացեալ , նշանակելով իրենց ամէն մէկ արշաւանքն ու յաղթանակն՝ աղիւսեայ տախտակներու , պնակիտներու (tablette), կամ՝ ընգհանրապէս՝ բնական ժայռերու եւ մասնաւոր կանգնած յիշատակարաններու վրայ : Այս վերջին յիշատակարաններէն կը գտնուին մեծ քանակութեամբ Վասպուրականի նաւահանգիստի մէջ , որ գլխաւոր օրրանն եղած է հայութեան , եւ որ դրական կերպով տեսած է Սրգիշթի մեծի եւ Մենուայի—ըսենք իսկ զգեան շրջան ի ամէնէն նշանաւոր դէմքերուն—քաջագործութիւններն ու միանգամայն բարեգործութիւններն : Այս մեծագործութեանց ամէնն ալ կը գրուէին մեծ խնամքով , առանձին զպիրներու ձեռքով , որպէս զի իրենց յիշատակն անջինջ մնայ երկրիս վրայ : Եւ իրօք այսպէս եղած է արդեւ : Եւ , գրեթէ երեք հազար երկա՛ր տարիներ թաւալելէ յետոյ հասնելով մեղի անաղարտ :

Որո՞նք էին այն ազգերը .—Գլխաւորաբար Ուրարտացիք (==Արարատեանք) , Մաննացիք (==Բուն Հայք կամ Նախահայք) , Նաիրիցիք եւ ուրիշ շատ մը մանր բայց իրարու դաշնակից թագաւորութիւններ , որոնք լեզուի նոյնութեամբ իսկ միութիւն մը կը կազմէին : Եւ սակայն , ինչպէս ըսինք , հայութեան բուն կորիզը կը կազմէր Վասպուրական , Վան քաղաքէն սկսեալ մինչեւ Ուրմիոյ լճին սահմանները :

Նոյն ժամանակուան Հայաստանի եւ իրեն դաշնակից երկիրներուն արձանագործութիւններէն զատ՝ պէտք է յորթուին ցեղերուն յիշատակարաններն ալ խառնելն Հայաց վրայ , քանի որ անդադար պատերազմի մէջ էին իրարու հետ : Եւ իրօք՝ զրացի Ասորեստանեայ պետութեան , —որ նշանաւոր եղաւ իր արշաւանքներով եւ որուն հպատակեցաւ ամբողջ Փոքր-Ասիան , սկսեալ Ուրմիոյ լճէն մինչեւ Միջերկրական ծովն , Կիպրոս կղզին , Եգիպտոսն եւ Եթովպիան , իսկ միւս կողմանէ՝ Արարատէն մինչեւ Պարսից ծոցն եւ Արաբիան , —թագած յիշատակներուն մէջ կը յիշուին Նախահայք : Առաջին յիշատակութիւնը կ'ընէ Ասորեստանի Թագաւոր Փաղասար Ա թագաւորն , եթէ ոչ քաջարձակապէս Նախահայոց (==Մաննայա՛րք)

այլ գէթ դաշնակից ու թերեւս ալ համացեղ տէրութեան մը՝ Նաիրի՛ի՝ նկատմամբ , զոր իրեն գրաւած երկիրներուն կարգին մէջ կը յիշատակէ : Նաիրի՛ի երկրին մէջ , որ կը ձգուէր Վանայ ծովուն հարաւային կողմէն մինչեւ Մալաթիա , 23 երկրի թագաւորներու յաղթած է այս թագաւորն , ինչպէս կը կարդանք Ելլասար՛ի աւերակներէն հանուած բեւեռագիր արձանագրութեան մը մէջ , իրենց բնիկ անուններով : (Սիւնակ Դ , տող 71—83) , Ասկէ զատ՝ Թագաւոր-Փաղասար կը յիշէ նաեւ թէ նոյն Նաիրի՛ի երկրին միւս 6() (վաթսուն) թագաւորներուն դէմ ալ պատերազմ մղած է յաղթութեամբ : (Անդ , տող 96—97) : Այս թագաւորն իշխած է 1120—1160 կամ՝ թերեւս ալ՝ 1230ին նախ քան Գբրիստոս . ժամանակ մը՝ որմէ զժբազդաբար հայերէն լեզուով ու տառերով գրուած յիշատակարան մը չունինք . արդ տեղն է ըսել—«Եթէ դոքա լոսցեն , քարինքդ աղաղակեսցեն» : Եւ ահա այն «քարերն» են որ մեզի կը «խօսին» այսօր : Այս յիշատակարաններու բոլորն ալ գրուած են բեւեռածեւ տառերով . այսինքն այն տառերով՝ որով գրուած են Վանայ բերդին ու ժայռին վրայ բազմաթիւ արձանագրութիւններ :

Բեւեռագիր կամ սեպագիր կը կոչուին այն տառերն՝ որոնք կը բաղկանան զամի կամ սեպի ձեւով վերէն վար եւ կամ ձախէն աջ քաշուած գծիկներէ եւ անկիւններէ : Այս տառերուն թիւը՝ չափազանցու թիւն չկարծուի՝ 400ի (չորս հարիւր) կը մօտենայ , առանց հաշուելու այն տառերն՝ որ քանի մը տեսակ ձայնական զօրութիւն կամ արժէք ունին . օրինակով խօսելու համար՝ ցոյց տանք միայն , թէ ուտ ձայնն ունեցող տառը՝ կը կարգացուի նաեւ ուղ , տ ու , տ ա մ , պ ա ր , պ ի ր , լ ա ի , լ ի ի , ի ի շ , ի ի ս , եւն (*) : Այս հաշուէն դուրս կը մնան գաղափարանշաններն , որոնցմով ամբողջ տառերուն թիւը կը հասնի հազարի :

Բեւեռածեւ արձանագրութեանց ուղիղ ընթերցման վկայ՝ դասական մատենագիրներն են . վասն զի պատմական ու աշխարհագրական շատ մը անուններ՝ գրեթէ մի քանոյն ձեւով կը ներկայանան երկուքին մէջ ալ , այսպէս՝ բեւեռագրութեանց Արծանիա գետը մատենագրաց եւ մեզի շատ ծանօթ «Արածանի» գետն է , Իգիգլաթ—«Դգլաթ» կամ Տիգրիս գետն է , Փուրատ—«Նփրատ» , Ուրարտ—«Արարատ» , Բիայնա—«Վան» , Տուչպա—«Տոսպ» , Արմինա—«Արմէնիա» , Լաբնանա—«Լիբանան» , Խիլակո—«Կիլիկիա» (նգիպտական մահնագրութեանց մէջ՝ Խալակ-

(*) Համեմատել մեր «Ասորաբաբեւական բեւեռագրութիւն» գործն , էջ 12 : (Տպ . Ի . Կ . Պոլիս) :

կա), Տ ա ռ զ ի—«Տարսոն», Մ ե լ ի դ դ ու—«Մելիտինէ» կամ Մալաթիա, Ու ռ ս ա լ ի մ ու—«Երուսաղէմ», Խ ա զ ա կ ի ա ու—«Եղեկիա», Ս ի ն ա խ իւ Ր ի ալ—«Սենեքերիմ», Մ ի դ ռ ա դ ա՛ տ ու—«Միհրդատ», Տ ի Ր ի դ ա՛ տ ա—«Տրդատ», Դ ա Ր ի ա վ ու շ—«Դարեհ», Կ ու Ր ա շ—«Կիւրոս» . եւն , եւն :

Արդ, դառնալով մեր բուն նպատակին, կրնանք ըմբռնել այսքանէն թե՛ թէ ո՛րքան մեծ է կարեւորութիւնը մեզ Հայոցս համար բեւեռազխտութեան ուսումն, իր ամէն ճիւղերով ու տեսակներով :

ԿԱՐԱՊԵՏ Թ . ԲԱՍՄԱՋԵԱՆ

